

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀՋՈՐՈՒԹՅԱՆ) ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության տարածքով էլեկտրական էներգիայի (հզորության) տարանցիկ փոխադրման գործընթացը:
2. Հայաստանի Հանրապետության տարածքով էլեկտրական էներգիայի տարանցիկ փոխադրման գործընթացում կողմերի հարաբերությունները կանոնակարգվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:
3. Սույն կարգում օգտագործված հիմնական հասկացություններն են՝
 - 1) **Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
 - 2) **Տարանցիկ փոխադրում՝** Հայաստանի Հանրապետության տարածքով էլեկտրական էներգիայի (հզորության) տարանցիկ փոխադրում Հայաստանի Հանրապետության տարածք՝ ժամանման վայրի (մուտքի) մաքսային մարմնից մինչև մեկնման վայրի (ելքի) մաքսային մարմին.
 - 3) **Տարանցիկ փոխադրման պատվիրատու՝** Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցվող էլեկտրական էներգիայի սեփականատեր կամ նրա լիազոր ներկայացուցիչը, որն ունի նաև սույն կարգին համապատասխան կնքված Տարանցիկ փոխադրման պայմանագիր.
 - 4) **Հաղորդող՝** էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ, ում տրված է նաև Հայաստանի Հանրապետության տարածքով Տարանցիկ փոխադրում իրականացնելու իրավունք.

- 5) **Համակարգի օպերատոր՝** էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
 - 6) **Հաշվարկային կենտրոն՝** էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
 - 7) **Պայմանագիր՝** Տարանցիկ փոխադրման պատվիրատուի և Հաղորդողի միջև կնքված Տարանցիկ փոխադրման պայմանագիր, որը ենթակա է համաձայնեցման էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի հետ և հաշվառման՝ Հանձնաժողովի կողմից.
 - 8) **Պայմանագրային քանակներ՝** Պայմանագրում ամրագրված տարանցվող էլեկտրական էներգիայի (հզորության) քանակներ.
 - 9) **Հաշվարկային ժամանակահատված՝** ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24:00-ին:
4. Տարանցիկ փոխադրումն իրականացվում է, երբ այն չի հակասում ներքին շուկայի սպառողների շահերին և չի նվազեցնում Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշները:
 5. Համակարգի օպերատորը կարող է դադարեցնել Տարանցիկ փոխադրումը՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների նվազման կամ նվազման վտանգի դեպքում:
 6. Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներով կամ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգում պլանավորված ռեժիմների խախտմամբ պայմանավորված Պայմանագրային քանակների հնարավոր չկատարման մասին Համակարգի օպերատորը անմիջապես իրազեկում է Հաղորդողին, իսկ Հաղորդողը՝ Տարանցիկ փոխադրման պատվիրատուին:
 7. Համակարգի օպերատորը Տարանցիկ փոխադրման սկսման, ընդհատման, վերսկսման և դադարեցման մասին գրավոր տեղեկացնում է Հաղորդողին և Հաշվարկային կենտրոնին:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

8. Տարանցիկ փոխադրումն իրականացնում է Հաղորդողը:
9. Հաղորդողը Տարանցիկ փոխադրումն իրականացնում է Հանձնաժողովի տրամադրած էլեկտրական էներգիայի հաղորդման լիցենզիայի, ինչպես նաև Տարանցիկ փոխադրման պատվիրատուի, Համակարգի օպերատորի և Հաշվարկային կենտրոնի հետ կնքված պայմանագրերի հիման վրա:
10. Հաղորդողը ներկրման (ներմուծման) կետում Տարանցիկ փոխադրման պատվիրատուից ընդունում է տարանցվող էլեկտրական էներգիան և արտահանման կետում հանձնում Տարանցիկ փոխադրման պատվիրատուին:
11. Հաղորդողի կողմից արտահանման կետում Տարանցիկ փոխադրման պատվիրատուին հանձնվող՝ տարանցվող էլեկտրական էներգիայի քանակը ($V_{էլք}$) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$V_{էլք} = V_{տուրք} * (1 - k/100),$$

որտեղ՝

$V_{տուրք}$ -ը Հաշվարկային ժամանակահատվածում Տարանցիկ փոխադրման նպատակով ներկրման կետում հաշվառված էլեկտրական էներգիայի ծավալն է,

k-ն Հաշվարկային ժամանակահատվածում Տարանցիկ փոխադրման ընթացքում առաջացող էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորստի տոկոսային մեծությունն է, որն ընդունվում է Հաշվարկային ժամանակահատվածում հաղորդման ցանցերի փաստացի կորուստների տեսակարար (տոկոսային) մեծության հիման վրա:

12. Տարանցիկ փոխադրման ընթացքում էլեկտրական էներգիայի հաշվառումն իրականացնում է Հաշվարկային կենտրոնը՝ Հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի «Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգը հաստատելու մասին» N°110Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգին համապատասխան:
13. Տարանցիկ փոխադրումն ապահովելու համար Հաղորդողը Համակարգի օպերատորի և Հաշվարկային կենտրոնի հետ կնքում է Հանձնաժողովի կողմից հաստատված օրինակելի ձևի համաձայն պայմանագրեր:

14. Տարանցիկ փոխադրման համար Հաղորդողի կողմից Տարանցիկ փոխադրման պատվիրատուին մատուցվող ծառայության գինը պետք է լինի ոչ պակաս Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրական էներգիայի հաղորդման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման սակագների հանրագումարից:
15. Տարանցիկ փոխադրման համար Հաղորդողը Համակարգի օպերատորին և Հաշվարկային կենտրոնին վճարում է Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման սակագներով: